



**Ծ**աղկածորի համայնքապետարանին պաշտոնական հարցում էինք արել, ի պատասխան՝ ստել են. «2025 թվականի ընթացքում Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի կողմից եղել են այցելություններ, կատարվել են տարածքների ուսումնասիրություններ՝ Ծաղկածորի համայնքապետարանի հետ համատեղ, սակայն խախտումներ չեն արձանագրվել»:

**Կարդացե՛ք էջ 4**



**Տ**իկին Նախարար, գուցե այսօր մանրամասն չներկայացնեի (թեեւ շատ ուշագրավ բաներ կրճատեցի) «Արշակունյաց» առողջության կենտրոնի առօրյան, եթե համոզված լինեի, որ, ընդհանուր առմամբ, տիրապետում եք ոլորտի վիճակին, հակառակ դեպքում՝ օրեր առաջ ինքնավստահ չէիք հայտարարի՝ բուժառուների 80 տոկոսը գոհ է նորոյթից:

**Կարդացե՛ք էջ 6**



**Ե**թե դեկտեմբերից ավելացնեին թռչաները, այն ավելի հասցեական կլինեի, ապրիլին մարդիկ կոմունալի թռիչքային գումարներ չեն վճարում: Կարծում եմ՝ այդ 10 հազարը կարելի է: Ինչ վերաբերում է թռչանառուի քաղաքական հայացքներին եւ իշխանություններին ընտրելուն, վստահ եմ, որ այդ 10 հազարն ազդեցություն չի ունենալու:

**Կարդացե՛ք էջ 8**

Hraparak daily newspaper  
4/41 Mashtoc St.  
0010 Yerevan, RA  
tel.52 66 70  
info@hraparak.am

**ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ**

N 28 (4163), 27 փետրվար, ուրբաթ, 2026



**www.hraparak.am**

# րադարակ

**2**025-26 թթ. ուսումնական տարին սկսվեց սկանդալով. առաջին դասարանցիների ծնողները հայտնաբերել էին, որ Այբբենարանում չկա հայոց գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի նկարը: ԿԳՄՍ Նախարարը հայտարարեց, որ այն առաջին դասարանցիները կարող են տեսնել QR կոդով: Սակայն վրդովված ծնողները եւ հանրությունը չէին հանդարտվում եւ մինչ օրս՝ այս իշխանությունների ավերածությունները թվարկելիս, անպայման հիշում են Մաշտոցն Այբբենարանից հանելու փաստը: Մենք տեղեկացանք, որ աղմուկն ու հանրային զայրույթն իրենց դերը խաղացել են՝ 2026-27 ուստարվա դասագրքերն են արդեն տպագրվում, եւ այս տարվա Այբբենարանում Մաշտոցն արդեն իր արժանի տեղն է զբաղեցրել դասագրքում՝ առանց QR կոդերի ու մանիպուլյացիաների: ԿԳՄՍ-ից մեր լուրը հաստատեցին. «2026-2027 ուսումնական տարվա «Այբբենարան» դասագրքի վերահրատարակման համար Նախարարությունն իրազեկել է «Այբբենարան» դասագրքի հեղինակներին՝ վերանայել եւ շտկել դասագրքում առկա սխալներն ու վրիպակները՝ պարտադիր ներառելով Մեսրոպ Մաշտոցի նկարը եւ հայոց այբուբենը: «Այբբենարան» դասագրքի հեղինակներն արդեն իսկ ուղարկել են «Մայրենի» առարկայի 1-ին դասարանի «Այբբենարան» դասագրքերի լրամշակված տարբերակների էլեկտրոնային տպագրական ֆայլերը: Ներկայացված էլեկտրոնային տարբերակները սահմանված կարգով ներկայացվել են փորձաքննության»:



## Փառահեղ ծրագիր

Ինչքան չես անի՝ հանուն բվեի: Ասածդ խոսքից էլ հետ կկանգնես (չնայած այս տարիներին այնքան հաճախ ես հետ կանգնել, որ դա այլեւս ոչ մեկին չի զարմացնում), թշնամիներիդ հետ էլ կհաշտվես (անգամ ընդդիմության ու կաթողիկոսի դեմ այլեւս ստատուներ չես գրի, հայտարարություններ չես անի), հանրային ամենափոքր աղմուկն ու պահանջն էլ սրբորեն կկատարես (ջրամատակարարման գրաֆիկ կփոխես, կենսաթոշակ կբարձրացնես, կրկնակի ասֆալտ կանես): Ամեն Աստծո օր սրտիկ ցույց կտաս եւ անգամ Լեհաստանի վարչապետին կհորդորես՝ սրտիկ ցույց տա հայ ժողովրդին ու հասկացնի, որ դու ոչ միայն Թուրքիայի ու Ադրբեջանի սրտի թեկնածուն ես, այլ՝ նաեւ՝ Լեհաստանի: Կարող ես անգամ Վլադիմիր Վլադիմիրովիչին բարեկամական ժեստեր անել, այն էլ՝ եվրոպական լարանում, ակնարկելով, որ միայն Արեւմուտքը չի շահելու քո վերջնականությունը, այլ՝ Ռուսաստանն էլ չի տուժելու: Դիմա բոլորին խաբելու, ավելի շուտ՝ ֆռոնցներու սեզոնն է: Ամենակարեւորը՝ մինչեւ հունիսի 7-ը հնարավոր շատ մարդու խաբես ու համոզես, որ գնան քեզ ձայն տան կամ՝ գոնե չխանգարեն: Այնպես անես, որ այս հիմարներից ոչ մեկի մտքով չանցնի, որ դու հենց այս օրերին, երբ բարի պապիկի դեմքով սրտիկ ես ցույց տալիս, ժպտում բոլորին ու համեստ ձեւաւում, իրականում վրեժի ու պատժի մի գրանդիոզ ծրագիր ես մտնում, թե հունիսի 7-ից հետո ոնց ես այս բոլորի հախից գալու: Ոնց ես իրենց քթից բերելու այս օրերի քո նվաստացման համար: Ոնց ես դրժելու խոստումներդ ու հրաժարվելու բոլոր խոսքերիցդ: Ոնց ես 5 տարի քեֆդ եկածն անելու՝ արհամարհելով 33 ընտրող կոչվածին, հյուսիսային ու անգամ արեւմտյան հարեւաններիդ, ինչպես ես բյուջեն հորից ստացած կապիտալի պես ծախսելու, քեզ ծառայողներին խրախուսելու, քո դեմ դուրս եկածներին բերդերում փտեցնելու:



*Չնայած ԶԳ-ում մտադիր էին ազգային փոքրամասնության ասորի եւ բուրդ ներկայացուցիչներին փոխել, խոսքն Արսեն Միխայլովի եւ 80-ամյա Կնյազ Յասանովի մասին է, սակայն երկար փնտրտությունից հետո կանգ են առել Նույն անձանց վրա, քանի որ նշված համայնքներում իշխանության գաղափարները կիսող «խելքը գլխին» երկրորդ մարդ չեն գտել: Այսպիսով կարելի է ասել՝ արդեն պատրաստ է ԶԳ-ի նախընտրական ցուցակի 2-րդ մասը, որը կազմվում է ազգային փոքրամասնություններից: Եզդիական համայնքից կրկին ընտրվել է Ռուստամ Բաթյանը, ռուսական համայնքից՝ Ալեքսեյ Սանդիկովը, քրդերից՝ Կնյազ Յասանովը, իսկ ասորիներից՝ Արսեն Միխայլովը: Ըստ օրենքի՝ ամենաշատ ձայն ստացած ուժին «բաժին է հասնում» թվով ամենամեծ՝ եզդիական համայնքի ներկայացուցիչը, իսկ եթե այդ ուժի մանդատները կրկնակի ավելի են, նաեւ՝ ռուսական համայնքի, իսկ եթե ունի սահմանադրական մեծամասնություն, ապա՝ երեքն էլ:*

**Ի**նչպես ես սպասելի եր, ԶԳ-ում ներկուսակցական հետընտրական «բազաններ» են սկսվել. թիմում դժգոհությունը մեծ է նախընտրական ցուցակի ձեւավորման համար անցկացված ներկուսակցական ընտրություններից: Առայժմ դժգոհությունները՝ բողոքարկման դիմումների տեսքով, ներկայացնում են շարքային կուսակցականները: Գործող պատգամավորները եւ մյուսները մտադիր են հարցը քննարկել անձամբ Փաշինյանի հետ: Մեզ ասացին, որ բողոքարկման դիմումներ են ներկայացվել շարքային կուսակցականներից ոմանց կողմից՝ արգելված քարոզչության հետ կապված, ինչպես նաեւ՝ կուսակիցներից որոշների դեմ հակաքարոզչություն իրականացնելու հետ կապված: Պարզեցինք, որ Վայոց Ձորի պատվիրակներից մեկն է բողոքարկման դիմում ներկայացրել իր գործընկեր պատվիրակի դեմ, որը, իր կարծիքով, պատգամավոր Տրդատ Սարգսյանի դեմ նախընտրական շրջանում հակաքարոզչություն էր իրականացրել:



## ՎԻՃԱԿՆ ԱՅՆՔԱՆ ՎԱՏ Է՝ ԹՈՇԱԿ Ե ԲԱՐՉՐԱՅՆՈՒՄ

Թոշակները 10 հազար դրամով բարձրացնելու Նիկոլ Փաշինյանի անսպասելի «աջալուսանքը» խուճապ է առաջացրել ԶԳ-ում: Մի քանի օր է՝ կուլիսներում քննարկում են, թե, ուրեմն, վիճակն այնքան վատ է, որ Փաշինյանը որոշել է ինքն իրեն դեմ գնալ եւ շաբաթներ առաջ իր ասածը հերքել, գնալ մի քայլի, որի անհրաժեշտությունը չէր տեսնում այն ժամանակ: Չնայած կուսակցական փակ հավաքների ժամանակ Փաշինյանը ԶԳ-ականներին դուրս է տալիս, որ «60+»-ի համար եմք

պայքարում, բայց ԶԳ-ում բոլորը հասկացել են, որ եթե Փաշինյանի «խփած» տոկոսներն իրականությանը մի քիչ մոտ լինեին, ինքն իրեն այսօր ծաղրի առարկա չէր դարձնի՝ ինքզինքը հակասելով ու մի ամիս առաջվա իր ասածներին դեմ գնալով: Ի դեպ, ԶԳ-ում չեն բացառում, որ եթե իրավիճակը նման քայլերով չփոխվի հոգուտ իրենց, մի «վերջին վարիանտ» ուժային մեթոդներով խաղից դուրս կհանեն որոշ ընդդիմադիրների: Չնայած այստեղ էլ նոր վտանգներ կարող են ծագել:





- **Օրերս Նիկոլ Փաշինյանն անսպասելի հայտարարություն արեց՝ ջնայած ընդամենը 1-2 ամիս առաջ ասում էին, որ 2026-ին կենսաթոշակների բարձրացում չեն նախատեսում, եւ 10 հազար դրամով թոշակի ավելացումը ոչինչ չի տալու թոշակառուներին, սակայն հանկարծ որոշեցին, որ տալիս է, եւ ապրիլի 1-ից թոշակները 5-10 հազար դրամով կավելանան:** ԶՊ-ական բոլոր ուսապարկերը սկսեցին, իրենց հերթը չտալով, խոսել այդ մասին, այնպիսի տպավորություն է, որ խոսքը ոչ թե 10 հազար դրամի, այլ 10 հազար դոլարի մասին է: Համացանցում մարդիկ անգամ կատակներ են հորինել՝ 10 հազար դրամ թոշակի բարձրացման մասին, գրում են, որ նույնիսկ Բիլ Գեյթսն է ուզում Հայաստան գալ՝ թոշակ ստանալու, եւ այլն: Բացի այդ, 10 հազարով ավելանում է ընդամենը 70 հազար մարդու կենսաթոշակը, իսկ թոշակառուների բանկը մեզանում 600 հազար է: Ինչ կարծիք ունեք թոշակների բարձրացման մասին՝ որպես նախկին սոցալստիստ:

- Ընդհանրապես, կենսաթոշակները սովորաբար առանձին հիմնադրամներով էին բաշխվում, հիմա, որքան հասկանում եմ, այն բյուջետային է: Սակայն դա սխալ է: Որպես կանոն, պետության պահուստային ֆոնդից թոշակ չեն տալիս, այն չնախատեսված դեպքերի համար է, իսկ թոշակը չի կարող լինել չնախատեսված դեպք, դա ինչ բան է: Հետևաբար, այս բարձրացումը չի կարող լինել չնախատեսված: Ուրեմն բավարար չէ, որ մեկ անձը, անգամ եթե նա վարչապետն է, իր հայտարարությամբ թոշակ կարող է բարձրացնել: Այս խնդիրը պարտադիր պետք է գնա Ազգային ժողով, պետք է

քննարկվի բյուջետային օրենքում փոփոխություններ մտցնելու հարցը, եւ նոր միայն տեղի ունենա բարձրացումը: Առանց Ազգային ժողովի քննարկման նման որոշում կայացնել՝ նշանակում է արհամարհել Ազգային ժողովը, արհամարհել օրենքներն ու գործընթացները՝ առաջացնելով անորոշություններ: Բայց բանի որ այս մարդկանց մոտ վարդուց չկա, չգիտեմ էլ, թե ինչ ասեմ, ապա կարող եմ ամեն բայի էլ դիմել: Առանց օրենքների էլ կարող են աշխատել, սակայն ես չեմ հասկանում մի բան՝ մեծամասնություն են կազմում իրենք, ինչն է խնդիրը, որ այսպես օրենքներ են խախտում: Բյուջետային օրենքում հարկավոր են փոփոխություններ, թոշակը չի կարող բարձրանալ ինչ-որ մեկի ցանկությամբ: Պետք է օրինական ճանապարհով առաջնորդվել, սա ինչ բան է, ստացվում է՝ ողորմություն են տալիս, բայց սա պետություն է, այդպես չի կարելի: Ես շնորհավորում եմ մեր թոշակառուներին, նրանք անտարբեր չեղան այս հարցում եւ կարողացան գոնե չնչին փոփոխությունների հասնել: Ես շատ տպավորված եմ, որ մեր թոշակառուները պայքարեցին եւ, ի տարբերություն շատերի, անտարբեր չեղան: Ուզում եմ նաեւ անդրադառնալ իշխանությունների պարզեցմանը: Դրանք ես պետք է բերել օրենքի դաշտ ու կանոնակարգել, որպեսզի չլինի սուբյեկտիվ: Ես գիտեմ դեպքեր, որ հիմնարկի ղեկավարն ինքն է իր անձնական մոտեցմամբ որոշում ում որքան պարզեցատրի: Բնական է, որ այստեղ կա քաղաքական ենթատեքստ: Օրենքով եթե այս հարցը չկարգավորվի, ապա պետականությունն աղճատվելու է: Խնդիրները պետք է լուծվեն օրենքով, չի կարելի վարչապետին ու այլ պաշտոնյա-

ների թույլ տալ, որ ինչպես ուզեն, վարվեն: Սրանք նախադեպեր են, որոնք հետագայում խիստ բացասական են ազդելու պետության վրա: Հենց պատկերացում, թե ինչ է անելու հաջորդ իշխանությունը, որ այս իշխանությունների հեռանալուց հետո քիչ թե շատ օրենքը հարգվի՝ պաշտոնյաների կողմից:

- **Թոշակների հետ կապված՝ մի խնդիր էլ է առաջացել: Քիչ թոշակ ստացողների թոշակն ավելի շատ է բարձրանալու, բան բարձր ստացողներինը: Ստացվում է՝ կյանքում մեկ օր չաշխատած մարդն այնքան թոշակ է ստանալու, որքան 40 տարվա աշխատանքային փորձ ունեցողը: Մարդիկ տարակուսում են, ասում են, որ սա մեծ անարդարություն է, չի կարելի այսպես վարվել:**


- Երբ խնդիրը ոչ թե օրինական ճանապարհներով են փորձում լուծել, այլ՝ քաղաքական ճանապարհներով ու նպատակահարմարությամբ, ամեն բան իր տեղն է ընկնում: Պարզեցման քննարկների ահռելի թվերից

ընտրվում են, այդքան բան: Եթե այս պրոցեսը չմտավ Ազգային ժողով, եւ գոնե պատշաճ քննարկում չեղավ, ապա դա նշանակում է, որ գործ ունենք սովորական ընտրակաշառքի հետ:

- **Իսկ, ինչ եք կարծում՝ թոշակառու ընտրողը հանուն այդ 10 հազար դրամի Նիկոլ Փաշինյանին կընտրի:**

- Բարդ հարց է: Ցավոք, ընտրությունների մեխանիզմներն այլ են: Ես՝ ինքս, ընտրությունների բազմիցս մասնակցել եմ՝ հատկապես գյուղական միջավայրերում, պետք է ասեմ, որ գյուղերում այլ մեխանիզմներ են գործում, որտեղ չկան վեհ գաղափարներ: Ազգակցական, արյունակցական կապերն են գերակշռում, մարդիկ առաջնորդվում են մանր շահերով: Ընտրողների համար՝ գյուղական շրջաններում կարեւորն այն է, թե ում հետ գործ ունեն: Ոչ թե կարեւորն առաջին դեմքն է, այլ՝ այն միջնորդը, արդյո՞ք միջնորդը հարց լուծող է, թե ոչ: Գյուղացուն սա է հետաքրքրում, ուրիշ ոչինչ: Ով կլինի, ով չի լինի, դա եսկան չէ, մարդկանց հետաքրքրում են հարց լուծողները, որքան էլ որ

«Յրապարակի» գրուցակիցը նախկին սոցալստիստ-խարար Ռազմիկ Մարտիրոսյանն է:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## Մեկ անձը, անգամ եթե նա վարչապետ է, չի կարող իր ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՇԱԿ ԲԱՐՁՐԱՅՆԵԼ

հետո առաջացավ ժողովրդական շարժում, մարդիկ հայտարարեցին, որ թոշակները պետք է բարձրացվեն, իսկ իշխանավորները պնդեցին, որ թոշակառու անգամ 10 հազար դրամ ավելի չի կարող ծախսել, ծախսելու տեղ չկա... Արդյունքում թոշակները բարձրացվեցին ոչ թե արդարությունը վերականգնելու համար, այլ՝ քաղաքական նպատակներով, ընտրություններ

դժգոհ են, գիտակցում են, որ չի կարելի, որ վտանգված է մեր ինքնությունը, հայկականությունը, Մաշտոցին են Այբուբենից հանել, Վիկտոր Համբարձումյանի անվան ամբիոնն են համալսարանում փակում, Հայոց պատմությունն են խմբագրում: Բայց, ցավոք, ընտրությունները գյուղական համայնքներում լինում են այլ սկզբունքներով:

## ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՄՈՒՈՐԵՅՐԵԼ ԵՆ, ՆԻՄԱ ՄԵՆՔ ԲԱՅՆԼՈՒ ԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՇԲԵՐԸ

Հարցազրույց ԶՊ-ական պատգամավոր Դավիթ Կարապետյանի հետ

- **Իշխանության կարկառուններ կայացուցիչները շաբաթներ շարունակ հայտարարում են, թե «Գյումրի 2» թույլ չեն տալու՝ նկատի ունենալով ընդդիմադիր ուժերի հետընտրական միավորումը եւ իշխանությունն ձեւավորելը: Ուզում եմ հասկանալ՝ այդ ինչպե՞ս թույլ չեք տալու, եթե օրենքն արգելք չի հանդիսանում ընդդիմադիր ուժերի միավորմանը, ինչ եք անելու՝ ընդդիմադիրներին բռնելու եք, ճնշելու եք:**

- Դուք գիտե՞ք՝ ինչ նկատի ունեն իրենք, ու գիտե՞ք՝ որտեղ է Ձեր տված հարցի մանիպուլյացիան կամ ընդդիմության մեկնաբանությունը մեր ասածին, որ «Գյումրի 2» թույլ չեն տալու: Հարցը նրանում է, որ «Գյումրին»՝ Գյումրու ընտրություններում ընդդիմության համախմբումը մարդկանց խաբելու արդյունքում է եղել, թեկնածուները սկզբում ասում էին մեկ այլ բան, իսկ հետո քաղաքացիների համար ոչ ընդունելի միավորում է եղել, խնդիրը դրանում է: Մեր թույլ չտալը սրա մասին է:

չտալն էլ հենց դա է լինելու, թույլ չենք տալու, որպեսզի ժողովրդին խաբեն:

- **Ինչ եք անելու: Ինչպե՞ս թույլ չեք տալու:**

- Պատմելու ենք իրականությունը մեր ժողովրդին, մենք մեր քարոզարշավն ենք անելու եւ մեկնաբանելու բոլոր այն պրոցեսները, որոնք կասկածի տեղիք կտան, որը եղել է Գյումրու պարագայում:

- **Անելու եք, հիմա էլ ասում եք, որ ընդդիմադիր խոշոր երեք բեկեռներն ընտրություններից հետո միավորվելու են: Բայց իրենք չեն էլ բացառում հետընտրական համագործակցությունը, հետընտրական միավորումները:**

- Նորմալ է դա, հետընտրական միավորումները շատ նորմալ են, բայց չի կարա թեկնածուն ասել, որ ինքն այսինչ կամ այնինչ գործի հետ կապ չի ունենալու, եւ քաղաքացիները նրան հավատալով ընտրեն, բայց վերջում պարզվի, որ գնացել միացել է այն մարդուն, ում էին ուզեցնում ընտրելիս: Եւ եթե իմանային՝ նման միավորում կլինի, բնականաբար, չէին գնա ընտրելին տվյալ թեկնածուին: Դրա համար ժողովրդի աչքերը բացվելու են:

- **Ճիշտ են հավանաբար ասում, որ ձեր դիրքերն այնքան թույլ են, որ դուք վախենում եք ընդդիմության միավորումից ու ձեր ծրագրերը թողած՝ իրենց դեմ հակաբարոզություն եք իրականացնում:**

- Մենք վախենում ենք, որ մեր քաղաքացիներին խաբեն եւ տանեն

այն տեղը, որտեղից սկսել ենք մենք, այսինքն՝ տանեն 2018 թվական եւ դրանից առաջ:

- **Իսկ ավելի ճիշտ չի լինի, որ դուք ձեր խաբածների համար պատասխան տաք ընտրողին, օրինակ, թե ինչպես էիք 2021 թվականի ծրագրում խոստանում Շուշին ու Հայդրուղը դեօկուպացնել, Արցախը պահպանել, բայց ամբողջ Արցախը հանձնեցիք եւ հայտարարեցիք, որ միշտ է եղել Ադրբեջանի մաս:**

- Դա առանձին խոսակցություն է, դրա մասին բազմաթիվ մեկնաբանություններ են եղել:

- **Միայն այդ խոստումը չէ, շատուշատ խոստումներ եք տվել ու չեք իրականացրել, ձեր 21-ի ծրագրի մեծ մասը չեք իրականացրել, եւ միայն գլխավորներից մեկի մասին նշեցի:**

- Մեր ծրագիրը չէր կարող Շուշին վերաբերել, որովհետեւ Հայաստանի Հանրապետությունում էին ընտրությունները եղել:

- **Այդ դեպքում ինչո՞ւ էիք ձեր ծրագրում գրել այդ մասին՝ մոլորեցնում էիք ընտրողին:**

- Ես չեմ հիշում նման բան:

- **Լավ, իսկ ինչպե՞ս եք բացատրելու թոշակների անսպասելի բարձրացումը, երբ մեկ ամիս առաջ ասում էիք՝ 26-ին թոշակները չեն բարձրանալու: Շատերն ասում են՝ ձեր վիճակն այնքան վատ է, որ այդ պատճառով նման ֆորսմաժորային որոշում կայացրիք՝ տարվա կեսին բարձրացնել թոշակները, բոլորո-**

վին վերջերս Փաշինյանն ասում էր, որ չկա դրա անհրաժեշտությունը, եւ դրանից թոշակառուների կյանքի որակը չի փոխվի: Նման բազում քայլեր եք անում հիմա: Բյուջեի հաշվին ընտրակաշառք եք բաժանում:

- Նախ, մեր նախընտրական ծրագրում թոշակների բարձրացման մասին խոսակցություն ունեցել ենք, շատ տրամաբանական է, որ ինչ-որ պահի պետք է գնային դրան: Հավանաբար, բյուջետային պլանավորումը հասել է այն մակարդակին, որը տվել է այդ հնարավորությունը:

- **Ընտրություններից հաշված ամիսներ առաջ, 26-ի բյուջեն դեկտեմբերին եք ընդունել՝ այնտեղ նախատեսված չէ այս բարձրացումը:**

- Գիտե՞ք՝ ընդդիմությունը միշտ պետք է քննադատի իշխանությանը, իշխանությունն էլ փորձի իր ծրագրով գնալ առաջ: Մենք էլ եթե ընդդիմություն լինենք, ինչ-որ իրավիճակ լինի, պիտի քննադատենք:

- **Փաշինյանը մեկ հասկացավ, որ թոշակառուն այլևս կարող է այդ 10 հազար դրամը ծախսել, օրեր առաջ ասում էր՝ չգիտեմ:**

- Դուք կոնտեքստից կտրում եք խոսակցությունը, փաստն այն է, որ մենք ունենք թոշակառուների մեծ խումբ, ովքեր 10 հազար դրամով հավելյալ իրենց խնդիրները կլուծեն: Ու հետո՝ ինչ կապ ունի, թե երբ ենք անում, մենք մեր տված խոստումները 5 տարվա ընթացքում մեծիմասամբ կատարել ենք:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ  
lusine.shahverdyan@hraparak.am



Ասեք, ասեք, որ դուք գաբ իշխանության, կնքելու եք խաղաղության պայմանագիր, թե՛ ասելու եք՝ քանի դեռ Ադրբեյջանը դուրս չի եկել Հայաստանի ինքնիշխան տարածքից, քանի դեռ Բաքվի բանտերում հայ գերիներ կան, խաղաղություն չի լինելու. սա է փաշինյանական բարոզության հիմնական թեզ-հարցը՝ ուղղված ընդդիմությանը: Նման հարցադրումներով փորձում են ընդդիմությանը, ընդդիմադիր գործիչներին թակարդը գցել, դնել անելանելի դրության մեջ, թվում է՝ ինչ էլ պատասխանես, միեւնոյն է, ընդունելու ես պարտությունը: Ասես, որ, իհարկե, չենք ստորագրելու, քանի դեռ այդ խնդիրները չեն լուծվել, ասելու են՝ տեսեք, սրանք չեն ուզում խաղաղության պայմանագիր, ուզում են Ադրբեյջանին սարքեն նոր պատերազմի ու նոր զոհերի, նոր տարածքային կորուստների: Պատասխանեն, որ, այո՛ ստորագրելու ենք խաղաղության պայմանագիր՝ ներկա պայմաններով, կնշանակի ընդունել, որ իշխանությունն ամեն ինչ ճիշտ է անում, եթե իշխանության գան, նույնն են անելու, եւ իրենց պայքարը ոչ թե իշխանության կողմից իրականացվող սխալ բաղադրանքները փոխելու համար է, այլ ուզում են իրենք վայելեն իշխանությունը, դրանից հասարակությանն ինչ:

Նախ, անգամ այն դեպքում, երբ Հայաստանի գործող իշխանությունն ընդունել է տարածքային կորուստների փաստը, չի պահանջում սկզբում դուրս գալ այդ տարածքներից եւ նոր միայն ստորագրել խաղաղության պայմանագիր, համաձայն է խաղաղության պայմանագիր ստորագրել անգամ այն պայմաններում,

որ Բաքվի բանտերում ապօրինի պահվում են հայ գերիներ, որոնք մեղադրվում են այնպիսի հանցանքներում, որպիսիք կարելի է վերագրել ցանկացած ՀՀ բաղադրանք, անգամ Արցախն ուրացած եւ այն Ադրբեյջանի մաս ճանաչած ՀՀ վարչախմբի ներկայացուցիչներին, որը համաձայն է Ադրբեյջանի անխոչընդոտ ճանապարհ տրամադրել՝ Նախիջևանին եւ Թուրքիային կապվելու համար, միեւնոյն է՝ Ադրբեյջանը չի ստորագրում խաղաղության պայմանագիր: Նշանակում է, որ գործող իշխանությունը եւս չի կարող երաշխավորել, որ Ադրբեյջանը կստորագրի խաղաղության պայմանագիրը, խաղաղությունը երաշխավորված չէ:

Ադրբեյջանի պահանջները Հայաստանից անհամեմատ ավելի ընդարձակ են. այս պահին Ադրբեյջանը, որպես խաղաղության պայմանագրի ստորագրման նախապայման, առաջ է քաշում Սահմանադրության փոփոխությունը: Պահանջում են, որ Հայաստանը, հայ հասարակությունն իրենց հավաքական քվեարկությամբ հրաժարվեն Անկախության հռչա-

## ԻՍԿ ԴՈՒՔ ԿՈՂՄ ԵՔ ԱԴՐԲԵՅՋԱՆԱԿԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՎԱՆՋԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆԸ

կագրից, ցեղասպանության միջազգային ճանաչումից, Արարատով գինանշանից: Փաշինյանը եւ նրա հպատակները համաձայնել են կատարել Ալիեւի այս մի քանի պահանջները եւս, կատարել Սահմանադրության փոփոխություն՝ խորհրդարանական ընտրություններից հետո, եթե, իհարկե, իրենց հաջողվի վերարտադրվել: Բայց Ալիեւն ասում է, որ միայն դրապարակային համաձայնությունը բավարար չէ, իրենք

պահանջում են այդ պահանջի ինստիտուցիոնալ իրականացում, ՀՀ բաղադրանքները գնան եւ քվեարկեն իր ներկայացրած Սահմանադրության օգտին, ինչը կնշանակի ադրբեյջանական պահանջների հանրային ընդունում, հանրային հպատակեցում:

Բայց նույնիսկ այդ պահանջներն ընդունելուց հետո ԶԴ-ն եւ ԶՊ-ական բարոզիչները չեն կարող երաշխավորել, որ Ադրբեյջանը կստորագրի խաղաղության պայմանագիր, այսինքն՝ կիրառվի Հայաստանի նկատմամբ ագրեսիայից եւ նոր պահանջներ չի առաջադրի: Իսկ պահանջների ցանկն անվերջ է եւ հաջորդ՝ 300 կամ գուցե 500 հազար ադրբեյջանցիների վերադարձի՝ Հայաստանում ապրելու իրավունքն ամրագրում է՝ նրանց կորցրած սեփականության իրավունքը վերականգնելով: Բնականաբար, այդ ադրբեյջանցիները, ապրելով Հայաստանի Հանրապետությունում, ստանալու են ՀՀ բաղադրանքներ, ունենալու են ընտրական իրավունք, ընդ որում՝ ոչ միայն ընտրելու, այլեւ՝ ընտրվելու: Ադրբեյջանցիները պահանջելու են նոր սահմանադրական

Եւ նաեւ ազգությամբ հայ բնակչության թիվը: Հաջորդ խորհրդարանում հայերը լինելու են ոչ միայն եթնիկ փոքրամասնություն, այլեւ՝ ընդդիմություն, քանի որ իշխանությունը ձեւավորելու են հենց ադրբեյջանցիները:

Այնպես որ՝ երբ իշխանության բարոզիչներ Պետրոս Ղազարյանը, Ռուբեն Ռուբինյանը եւ այլք հարցնում են՝ իսկ դուք դե՞մ եք խաղաղության պայմանագրին, իշխանության գա-



ԻՌԻՆԱ

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

«Ճ իշտ չէ՛ արտահայտությունները մանկապուլցված, ձեւախելված բերել ներկայացնել որպես բացարձակ ճշմարտություն»,- ասել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի պաշտոնը զբաղեցնող Թորոսյան Արսենը՝ ի պատասխան «Կառավարությունում, ի վերջո, քննարկեցի՞ք, հասկացա՞ք, թե թոշակառուներն ինչպես կարող են 10 հազարը ծախսել, որ որոշեցի՞ք 10 հազարով ավելացնել թոշակները» հարցին: Կարծում են, որ այստեղ առկա չէ որեւէ մանկապուլցում կամ ձեւախելում: Հատկապես որ լրագրողները դժվար թե ի վիճակի լինեն մրցակցել մանկապուլցային «մաստեր կլաս» ցուցադրող վարչապետի ու նրա թիմակիցների հետ:

Եվ հատկապես որ կենսաթոշակներն ավելացնելու փոխարեն, երբ մարդիկ «չէին իմանալու», թե ինչպես դա ծախսեն, այդ միջոցներն առողջապահության ապահովագրությանը հատկացնելու որոշումն ավելի քան ոչ ադեկվատ տարբերակ էր: «65+» տարեկան մարդկանց դեպքում նորմալ սնունդ ու ծմռանը բնակարանում նորմալ ջերմություն ունենալն ավելի կարեւոր է, քան դրանց բացակայության դեպքում առաջացած հիվանդությունների բուժումը: Էլ չասած լուրջ պրոցեդուրաների առումով շաբաթներ կամ նույնիսկ ամիսներ տեւող հերթերի հանգամանքի մասին: Կարծում են, որ դա այն է, ինչ պետք է բժշկական կրթությամբ նախարարը բացատրեր իր վերադասին,

որպեսզի վերջինս առաջին երկու երեւոյթները՝ սնունդը եւ ջերմությունը, չհակադրեր երրորդին՝ առողջապահության ապահովագրությանը:

Ես հասկանում եմ, որ երկու անգամ «մեծարգո վարչապետ պարոն Փաշինյանի» վստահությունը կորցրած ու «վերին» կամքով վերականգնած նախարարի համար անհնար բան է լինելու նրան խորհուրդներ տալը, որովհետեւ հայտնի է, որ վերջինս ամենագետ է եւ փորձագետի մակարդակ ունեցող անձ՝ կենսագործունեության համարյա բոլոր ոլորտներում կամ էլ՝ առանց «համարյա»-ի: Իսկ եթե այնուամենայնիվ պարզվում է, որ վերջինս ինչ-որ բանի առումով սխալ բան է ասել կամ արել՝ դա եսկան չէ, քանի որ ունի դրա հիմնավոր արդարացումը. ինքն այլեւս չի հիշում: Այս առումով է, որ լրագրողներին մանկապուլցային ու ձեւախելում մեջ մեղադրող նախարարը պետք է ճիշտ հասցեագրեր ասելիքը:

Անցնենք նախարարի պաշտոնը զբաղեցնող անձի եզրափակիչ մտքին: «Ես չեմ կարծում, որ մեր որեւէ բաղադրանք այլ բան է հասկացել, քան նկատի են ունեցել վարչապետը եւ մենք՝ կառավարության նիստերում քննարկելիս»,- ասել է նա: Իսկապես, որպես ՀՀ բաղադրանքի եւ այն էլ «65+» տարեկան, կարող եմ վկայել, որ ես հասկացել եմ այն, ինչ ցանկացել է կարեւորել նախարարին պաշտոնի նշանակած Փաշինյանը, ինչը եւ ներկայացրի հողվածի սկզբում: Շուտով 8-րդ տարին կլրա-

փոփոխություններ, որով ադրբեյջանները հետագայում կճանաչվի երկրորդ պետական լեզու եւ այլն:

Եթե ԶԴ-ն ինչ-որ ձեւով կարողանա վերարտադրվել, առաջիկա 5 տարիները լինելու են Հայաստանի ադրբեյջանականացման տարիներ, հաջորդ ընտրությունների ժամանակ ադրբեյջանցի ընտրողների թիվն էականորեն գերազանցելու է հայ ընտրողներին, քանի որ ադրբեյջանցիների գալուստն զուգահեռ, կրճատվելու

լով՝ հրաժարվելու եք խաղաղության պայմանագիր ստորագրելուց, նրանց ուղղակի պետք է հարցնել՝ իսկ դուք կո՞ղմ եք Ադրբեյջանի ցանկացած պահանջի ընդունմանը, հանուն այդ փաստաթղթի ստորագրման, կո՞ղմ եք Հայաստանի ադրբեյջանականացմանը, պետականության ոչնչացմանը, որի դեպքում է միայն հնարավոր կատարյալ խաղաղություն: Վստահ եմ՝ նրանք միանգամից դրական պատասխան են տալու:

## Ո՞Վ Է ՄԱՆԻՊՈՒԼԱՑՆՈՂՆ ՈՒ ՆԱՐՅ ԶԵՎԱՆԵՂՈՂԸ

Նա, ինչ նա բազմել է վարչապետի պաշտոնին, սակայն իսկապես 7 տարի, ինչպես ինքն է ասել, մնացել է առաջին դասարանում: Իհարկե, ասվածն այլ համատեքստում է ինչել, բայց ինչպիսիք այն է, որ, անկախ իրենից, ինքը ներկայացրել է իր գործունեության մասին ողջ ճշմարտությունը:

Վերջում փորձեմ ըստ եռության պատասխանել փաշինյանական՝ «տունը տաքացնելու վրա լրացուցիչ 10 հազարը ծախսելու, երբ այդ տունը չունի կարգին դուռ ու պատուհան» դարակազմիկ մտքին: «խրուշչովյան» շենքի երկսենյականոց մեր բնակարանը վերանորոգել ենք շուրջ 20 տարի առաջ: Ու, փառք Աստծո, դեռեւս չկա ոչ դռան եւ ոչ էլ պատուհանի ճեղք, որպեսզի միջանցիկ բամբի փչի: Սակայն Երեւանը գտնվում է կլիմայական առումով մերձարեւադարձային գոտու հյուսիսային մասում՝ ծովի մակերեսային 850-1300 մետր բարձրության վրա՝ բնութագրվելով չոր ցամաքային կլիմայով: Նոր Նորք թաղամասի բարձրությունն էլ երեւի մոտ է հենց 1300 մետրին, ինչը նշանակում է, որ կարող են լինել ձմեռային ամիսներ, որ բավական ցուրտ լինեն նախորդ տարիների համեմատությամբ: Ու չնայած դժներում ու պատուհաններում ճեղքերի բացակայությանը՝ բնակարանի ջերմության համար ծախսվող գումարը կարող է եսկա-



նորեն տարբերվել միջինացված ինչ-որ գումարից: Ու 10 հազար դրամն էլ գնա դրան:

Ենթադրում եմ, որ արդեն 8-րդ տարին քաղաքի կենտրոնում՝ կենտրոնացված ջերմության պայմաններում բնակվող Փաշինյանը դա չի գիտակցում: Վատ չէր լինի, եթե նորթեցիները մեկ մարդու նման՝ հունիսի 8-ին քվեարկեին ոչ թե փաշինյանական ԶԴ-ի, այլ ընդդիմադիր որեւէ դաշինքի օգտին, ինչը կստիպեր, որ Փաշինյանն ի վերջո վերադառնար հայաստանյան իրականությունը՝ սեփականը ստեղծելու փոխարեն: Ու գիտակցեք, որ առողջապահության ապահովագրությանը հատկացվող գումարը չի կարող իրենով փոխարինել սննդի, ջերմության եւ բարեկեցիկ ապրելու համար անհրաժեշտ այլ ծախսերը:

Վախճանյան ՍԻՐԱԿԵՐՅԱՆ

Բաց նամակ առողջապահության նախարար Ա. Ավանեսյանին



Տիկին նախարար, Ձեզ քննադատում են՝ բժշկական համընդհանուր ապահովագրությունը թափփված, հապճեպ ներդնելու համար: Դուք էլ, իրավաբանի Ձեր անուրանալի պերճախոսությամբ, արդարանում եք, փորձում լավատեսություն ներարկել մարդկանց մեջ: Զայլը, իհարկե, ճիշտ է ու խրախուսելի, հատկապես՝ մոտեցող ճակատագրական ընտրություններից առաջ:

Ի դեպ, իմ շրջապատում փորձում են պաշտպանել Ձեզ՝ ինչո՞ղ հեզնական խոսությից, թե Ձեր պարելը՝ հայտնի միջոցառման ժամանակ, անտեղի ու անճաշակ էր: - Ինչ է, ասում են,- նախարարն իրավունք չունի անկաշկանդ, ուրախ անցկացնել իր ազատ ժամանակը, երբ նրա գործընկերները երբեմն զվարճանքի վարպետաց դասեր են տալիս անզամ եվրոպացիներին:

Հիմա՝ ըստ էության: Տարիքը, անպակաս սթրեսները եւ ամենօրյա հոգսերն անում են իրենց սեւ գործը, ու մարդը ստիպված թակում է բժշկի դուռը: Անկեղծ ասած, թերահավատ էի, թե ինչ-որ բան փոխված կլինի այս

պես ներս մտավ: Անցավ էլի 1,5 ժամ, ու ինձ էլ ներս կանչեցին: Կիսամերկ պառկած բուժառուն եւ բժիշկը սպասում էին բուժքորոշը:

- Ճնշումդ բարձր է,- ժամանակ է ձգում դոկտորը:

- Դուք էլ դրսում 4 ժամ սպասեիք...- խայթում է Եղուարդը:

- Ախր, իսկական գժանոց է,- բողոքում է դոկտոր Լեւոնը,- արձակուրդ գնացած բուժքորոշ գործն էլ եմ ես անում:

- Լրացուցիչ վճար պահանջեք,- խորհուրդ է տալիս նախկին իրավաբանը,- երկամր պիտի պառկած մնամ:

- Դե, հանգստանում ես, էլի,- սփոփում է բժիշկը:

Այս ընթացքում Եղուարդը մի քանի անգամ ինձինք ներողություն է խնդրում՝ սպասեցնելու համար:

Վերջապես ժամանում է փոխարինող բուժքույրը: Ու սկսվում է զավեշտը: Աղջիկը չգիտի՝ ինչպես է գրվում այս կամ այն տերմինը: Նրան օգնության է գալիս մեկ ուրիշ, գիտակ խալաթավոր: Եվ երբ բանը հասնում է «մեծ» կամ «փոքր» նշան դնելուն, քարկապ են ընկնում: Դոկտոր Մկրտչյանն օդում հուշող ինչ-որ անհասկանալի շարժում է անում...

- Այ մարդ, մի բան գրեք, ես գնամ, տևում է «հանգստացողը»:

...Վերջապես հերթը հասնում է ինձ: Թռուցիկ նայում է թղթերիս ու անսպասելի դիվոտում՝ Եսբան դեղ պիտի դուրս գրեմ, իմ աշխատանքային ժամը վերջացել է:

- Բայց ինչո՞ւ եք բղավում,- փորձում են «շողուլի բերել» նրան,- ինձ պետք է ընդունեիք ժամը 12-ին:

- Հասկացի...

Ինչ կա չհասկանալու...

Փոխտնօրենին նույնաման թեմայով երկու տարի առաջ եմ հանդիպել:

- Ոչ ոք Ձեզ վրա բղավելու իրավունք չունի,- քաջալերում-ցրում է նա,- բայց դե՞ գիտեք, ծանրաբեռնված ենք աշխատում...

Խոսակցությանը խառնվում է նաեւ գործն ավարտած տնօրենը: Նույն անհաղորդ, անտարբեր

կեցվածքն ու անհավես առարկությունները: Իսկ ես միամիտս կարծում էի, թե տիկինը կիրավորի բռնի սրտաբանին, կպարզեն եղելությունը, գուցե ներողություն կխնդրեն: Ավանդ, տնօրենն աշխատանքն արդեն ավարտել էր...

Տիկին նախարար, գուցե այսբան մանրամասն չներկայացնեի (թեեւ շատ ուշագրավ բաներ էլ կրճատեցի) «Արշակունյաց» առողջության կենտրոնի առօրյան, եթե համոզված լինեի, որ, ընդհանուր առմամբ, տիրապետում եք ոլորտում տիրող բարբերին, հակառակ դեպքում՝ օրեր առաջ ինքնավստահ չէիք հայտարարի, թե բուժառունների 80 տոկոսը գոհ է նորությից, մարդիկ շնորհակալություն են հայտնում, օրինում, առաջարկություններ անում: Գուցե էլ չգրեի, եթե դժգոհությունների ի պատասխան, թերապետն անտարբերությամբ չենտեր ինչ ուզում ես, որտեղ ուզում ես՝ գրի (արդեն հետո, երբ ասացի, որ հետեւելու եմ իր «հորդորին», անսպասելի ասաց՝ դալաթ եմ արել, ամեն ինչ էլի մեր գլխին է կտրվելու):

Գանք Ձեզ շեփորած շնորհակալություններին ու օրինակներին: Դրանք յուրօրինակ դրսեւորումներ ունեն այստեղ: Օրինակ, մարդն «օրինակներ» տեղալով՝ դուրս է գալիս թերապետի առանձնասենյակից եւ դուռն այնպես է շրխկացնում, որ պատից ծեփեր են թափվում: Էլի մեկը՝ հարեան թերապետից դժգոհ կինը, հուզմունքից դողալով, ասում է. - Ո՛չ կոմայուտերից եմ բան հասկանում, ո՛չ իրենց գործից, անտերություն է...

Հատակը մի բանի շերտ հնոտի լի-նոլեումով կարկատած բուժաստատության կիսախավար միջացքում հավաքված մարդիկ ըմբռնումով լռում են: Գուցե ասեք՝ ոչ մի լավ բան չկամր այդ հիմնարկում: Կար՝ լաբորատորիայի կանանց բարեկիրթ վերաբերմունքը: Նույնիսկ ժպիտ տեսա այստեղ:

Ի դեպ, տիկին նախարար, Ձեզ օրինողների շրջանում շատ

են պայթելու աստիճան գիրացած պատգամավորները, մեծ ու փոքր պաշտոնյաները: Նրանցից ո՞վ գիտի պոլիկլինիկայի տեղը, իր բժշկին: Նրանք, պետք է կարծել, իրենց հարգն իմացող մարդիկ են...

Տիկին Ավանեսյան, որբան էլ անհավատալի թվա, պարզվում է՝ չեք անտեսում «ներքեւից» եկող առաջարկությունները: Դե, ես էլ միանամ այդ «էստուգիատներին»: Կարծում եմ՝ պետք է արագ կարգավորել առողջապահական հիմնարկներում տիրող խառնափնթոր իրավիճակը (բժիշկները բողոքում են աշխատավարձերի կրճատումից, «ԱրՄեդ» ծրագիրը «կամակորություն» է անում, դուրս գրված դեղերը հաճախ չեն «գտնում» հասցեատիրոջը...): Ատեստավորել բժիշկներին եւ ըստ դրա արդյունքների կարգեր շնորհելով՝ համարժեք վարձատրություն սահմանել: Առանձնակի ուշադրություն դարձնել բուժաշխատողների բարեվարքությանը: Մի խոսքով, պայմաններ ստեղծել, որ առողջապահական հիմնարկներ այցելող մարդիկ նորմալ բուժում ստանան, գոնե նոր հիվանդություններ ձեռք չբերեն (սրտաբանն ինֆարկտի չհասցնի, նյարդաբանը «ներվերը չուտի», թերապետը դալաթ չանի...) եւ իսկապես օրինեն «էն սիսթը», երբ փորձեցիք մի լավ բան անել...

**ՀԳ.** Տիկին նախարար, գրելու որը ընթացքում աչքիս առաջ հանրահայտ բժիշկ Արմեն Չարչյանն էր, որը տարիներ առաջ, ոչ ստանդարտ մեթոդներով, փրկեց որդուս՝ ոտքի անդամահատումից (ի դեպ, օսցե՛մեղիտ ախտանշանն ի հայտ եկավ պոլիկլինիկայում «չիրանի» անտեղի վիրահատումից հետո): Առիթ է՝ երախտիքս հայտնելու այս մեծ մարդուն ու տաղանդավոր բժշկին: Օրերս իր առանձնասենյակում կատարված անհեթեթ, նվաստացուցիչ խուզարկությունից անմիջապես հետո նա շտապեց վիրահատարան... Արմեն Չարչյանի մեջ խոսում էր Հիպոկրատը...

### ՆԵՅ, ԴԻՊՈԿՐԱՏԻՆ ԴԻՇՈՂ ԿԱ՞

ոլորտում (տառապանքս փորձ ունի), եւ, ցավոք, չսխալվեցի: Այց գրանցելու համար հեռախոսազանգերիս՝ անպատասխան մնալուց հետո գնացի, պարզ ասած, պոլիկլինիկա, եւ պարզվեց, որ թերապետի մոտ «ընկնելու» համար 3,5 ժամ պիտի սպասեմ: Ճարս ի՞նչ, նա է որոշում հետագա անելիքները:

Հաջորդ օրը կեսօրին սրտաբանը պիտի ընդուներ: Ընդամենը երկու բուժառու կար: Ժամերն անցնում էին, իսկ հերթն առաջ չէր գնում: Նրանցից մեկը նյարդայնացած ետ ու առաջ էր անում, մյուսը հեռատեսորեն խաչբառ էր վերցրել հետը: Առաջինը չդիմացավ՝ բժշկի հասցեին «բարեմաղթանքներ» շաղ տալով՝ հեռացավ: Կես ժամ հետո Եղուարդը (որի հետ հասցրել էի ընկերանալ) վերջա-

Սիմոն ՀԱՎՈՐՅԱՆ ժուռնալիստների միության անդամ Պրոֆեսոր

## ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՂԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄՈՏ ԱՆՎԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵՆ Է



Սոցիալ-քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի մասնագետները՝ իրենց իրականացրած վերջին հարցախույզների արդյունքներն ամփոփելուց հետո: Երիտասարդների տազնապի հիմնական պատճառը, իհարկե, սեփական բարեկեցությունն է: Հարցվածների 79 տոկոսը խիստ անհանգստացած է սննդամթերքի թանկացումներից, 77 տոկոսը՝ բնակվումնալ վարձերի գնաճից, 74 տոկոսը՝ կյանքի ընդհանուր թանկացումից, 71 տոկոսը՝ ինֆլյացիայից:

Ռուս-ուկրաինական պատերազմն անհանգստացնում է հարցվածների 62 տոկոսին: Ռուսաստանյան հասարակության համար լուրջ խնդիրներ են համարվում թոշակառուների վիճակի վատացումը՝ 54 տոկոս, հանցավորության աճը՝ 52, կոռուպցիան եւ պաշտոնյաների ինքնիրավչությունները՝ 51, անվտանգության երաշխիքների բացակայությունը՝ 51, ահաբեկչությունը՝ 51, թմրամոլության տարածումը՝ 50 տոկոս, եւ միջուկային պատերազմի վտանգը՝ 50 տոկոս: ԵՄ-ի եւ

ԱՄՆ-ի հետ հարաբերությունների վատացումն անհանգստացնում է հարցվածների միայն 48 տոկոսին, Էկոլոգիական վիճակը՝ 47, ազգամիջյան կոնֆլիկտները՝ 44, ալկոհոլիզմը՝ 44, գործազրկությունը՝ 43, տնտեսական սանկցիաները՝ 42, ձեռնարկությունների փակվելը՝ 41, սոցիալական բեւեռացվածությունը՝ 42 տոկոսին: Ռազմական գործողությունների հետ կապված խնդիրները վերջին տարիներին հաստատուն կերպով մտնում են հասարակությանը հուզող ամենից կարեւոր երեք թեմաների մեջ: Այն անձանց տեսակարար կշիռը, որոնց հարազատները կամ ընկերները գոհվել են պատերազմի ընթացքում, ավելացել է՝ 3,5-ից հասնելով 7,3 տոկոսի: Ընդ որում, նվազել է պատերազմի հետ կապված նոր մոբիլիզացիայից անհանգստացողների տեսակարար կշիռը: Պատերազմական իրավիճակը, անհանգստություններն ավելացնելով հանդերձ, ձեւավորում է նաեւ հասարակության միասնակա-նացման, «դրոշի շուրջ համախմբման էֆեկտը»: Դրա վկայությունն իշխանության հանդեպ վստահության

աճն է: Սակայն հատկապես երիտասարդության շրջանում եղած տրամադրությունները չեն նպաստում հասարակության ներսում երկարատե կայունության ապահովմանը: Երիտասարդ ռուսաստանցիները ցուցաբերում են բարենորոգչական տրամադրություններ, եւ աճում է նրանց տեսակարար կշիռը, որոնք ուզում են, որ Ռուսաստանը լի-նի մարդասեր եւ իրավական պետություն, որը դավանում է խաղաղություն եւ արդարություն:

Այսպես, ըստ տարիքային խմբերի, 22 թվականից սկսած՝ կյանքի թանկացումը 18-24 տարեկանների շրջանում 34 տոկոսից դարձել է 63, 25-30 տարեկանների շրջանում՝ 48 տոկոսից հասել է 62-ի: Ապագայի նկատմամբ վստահությունը 25 թվականի համեմատ բավականին նվազել է: 18-24 տարիքային խմբում մոտ 24 տոկոսը եւ 25-30 տարեկանների շրջանում մոտ 18 տոկոսը դժվարացել է պատասխանել իրենց վաղվա օրվա վիճակի հետ կապված հարցին: Այս ամենը, ըստ մասնագետների, ազդում է ապագայի պլանավորման վրա, ինչը չի կարող դուրս մնալ իշխանությունների ուշադրությունից:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Աղստեւ գեռ արք ճեղքելու համար Տուգանք

Տավուշի մարզկենտրոնն Իջեան քաղաքում վերջին տարիներին կանոնավոր աղբահանություն է կատարվում, քաղաքի փողոցներում տեղադրվել են տասնյակ աղբամաններ, որտեղից աղբատար մեքենաները պարբերաբար աղբը դատարկում, տեղափոխում են համայնքի աղբավայր: Թեև աղբահանության վարձավճարը մեկ շնչի հաշվով ընդամենը 100 դրամ է կազմում, սակայն բազում բնակիչներ տարիներով աղբահանության վճարի մեծ պարտքեր են կուտակել: Նրանց համար վատ տվորույթ է դարձել աղբահանության վարձը չմուծելը: Համայնքապետարանն այդ գումարները գանձելու համար ստիպված է վարչարարություն կիրառել՝ վարչական վարույթներ հարուցել, դիմել դատարան եւ այլն:

Իջեանի համայնքապետարանը «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցել է վարչական վարույթներ՝ աղբահանության վճարի գանձման հարցը բնեւթու նպատակով: Համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը հունվարի 30-ին որոշում է կայացրել աղբահանության վարձավճարը գանձելու պահանջներ ներկայացնելու մասին: Այսպես, քաղաքացի Նարեկ Խաչատրյանից, հոգուտ Իջեան համայնքի բյուջեի, գանձել 45 հազար 560 դրամ, քաղաքացի Ալեքսանդր Բաղդասարյանից գանձել 60 հազար 500, քաղաքացի Մարիամ Ասատրյանից՝ 32 հազար, քաղաքացի Ռադիկ Մարգարյանից՝ 41 հազար 280, քաղաքացի Արագբեկ Խաչատրյանից՝ 55 հազար 640 դրամ:

Համայնքապետարանն աշխատանքներ է կատարում, որպեսզի բնակիչները քաղաքի կենտրոնով հոսող, Իջեանի գեղեցկություն համարվող Աղստեւ գետ արք չթափեն: Դրա համար գետափյան հատվածում տեղադրվել են տեսախցիկներ, որոնք տեսագրում են բնակիչների կողմից գետ արք նետելու դեպքերը: Իջեանի համայնքապետ Ա. Ճաղարյանը, ուսումնասիրելով «Իջեանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի տնօրեն Սուրեն Չիբուխյանի զեկուցագիրը եւ կից ներկայացված վարչական իրավախախտման վերաբերյալ 2026թ. հունվարի 8-ին կազմված արձանագրությունը՝ կից լուսանկարներով, պարզել է, որ Իջեանի երեսնայան 8 հասցեում գործող «Գագիկ Սարգսյան» ԱՁ-ի շենքից 2025թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 15:14-ին Աղստեւ գետ արք է նետվել, եւ այդ փաստի առիթով վարչական պատասխանատվության որոշում է կայացվել հունվարի 21-ին՝ Նշանակել վարչական տուգանք (տույժ) սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հիսնապատիկի չափով՝ 150 հազար դրամ:

Ռսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«Լռու մարզի ամենախոշոր գյուղը՝ Օծունը, զարգանում է ժամանակով», - ասել է Լռու մարզպետ Արեն Մկրտչյանը՝ Օծուն համայնք այցելությունից եւ Նորոզվող արվեստի դպրոցի աշխատանքներին հետեւելուց հետո: Օծունի արվեստի դպրոցի շենքը ՀՀ կառավարությունն է հատկացրել, իսկ շուրջ 90 մլն դրամի ներդրումը համայնք-ՄԱԿ-Շվեդիայի միջազգային զարգացման գործակալությունն է համագործակցության շրջանակում: Նախկինում արվեստի դպրոցն ու մանկապարտեզը տեղակայված էին Նույն՝ անբարեկարգ շենքում: Շենքի մի հատվածում երեխաները բնում էին, մյուս հատվածում երաժշտական դպրոցի դասերն էին ընթանում: Հիմա գյուղը կունենա բարեկարգ արվեստի դպրոց եւ մանկապարտեզ՝ առանձին մասնաշենքերում:

ՏԿԵ Ն ա խ ա ր ա ր Դ ա վ ի թ Խ ու ղ ա թ յ ա ն ը եւ ա շ խ ա տ ա ն թ ա յ ի ն այցով եղել է Լռու մարզում: Նա մարզպետի, Տաշիրի համայնքապետ Էդգար Արշակյանի հետ շրջել է մարզում: Տաշիր համայնքում էլ ճանապարհների, զբոսայգիների բարեկարգման, լուսավորության ցանցի արդիականացման, դպրոցների ու մանկապարտեզների կառուցման ու հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվում՝ կառավարություն-համայնք համաֆինանսավորմամբ (93 մլն դրամ): Տաշիրում սոր բժշկական կենտրոն է կառուցվում. ներդրումը՝ 4.5 մլն դոլար՝ 1 մլրդ 740 մլն դրամ: «Սիրելի քաղաքացիներ, ձեր վճարած հարկերով կառավարությունը, պետությունը՝ մարզը, Տաշիր քաղաքը քայլ առ քայլ ուղի է կանգնեցնում», - ասել է մարզպետը:

Վանաձորում Նույնպես ճանապարհաշինական աշխատանքներ

են իրականացվում. Սանկտ Պետերբուրգի փողոցն է նորոգվում՝ 554 մլն դրամի ներդրմամբ: Լռու մարզպետն այստեղ կատարված աշխատանքները եւս դիտարկել է, ցավոք՝ չի նկատել, որ փողոցը հիմնանորոգվել է միայն մեկ մայթով, երկրորդ մայթը վերացրել են: Ավազերում եւս ներքակային ասֆալտապատման ծրագիր է իրականացվում. համայնքային բյուջեից 42 մլն դրամով 2/30 եւ 1/12 շենքերի բակերն են կարգի բերվում, դիտահորերը փոխարինվում՝ ջրահեռացման համակարգի անցկացման, եզրաքարերի փոխարինման նպատակով: «2026 թվականին Ավազերում կունենանք ներքակային ասֆալտապատման խոշոր սուբվենցիոն փաթեթ», - ասել է մարզպետը:

Սանահինում՝ վթարային դպրոցի տեղում կառուցվում է շուրջ 5 մլն դոլար արժողությամբ Նոր կրթահամալիր (դպրոց եւ նախակրթարան)՝ 1 մլրդ 850 մլն դրամ կամ շուրջ 5 մլն դոլար արժողությամբ: «5-6 մլն դոլար արժեքով դպրոցները սովորական են

## ԱՎԱԳՈՒՅՆ ՆԱԾԱՆԻՇԸ ԲԱՂԱՔԱՑՈՒ ԳՆԱՎԱՏԱԿԱՆ Ե

դառնում մեզ համար», - նշել է Լռու մարզպետը: Լեռնավանում Ճապոնիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ կկառուցվի գեոմեթրանային ջրամբար. մարզպետը Սպիտակում դիմավորել է Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Անկի Յուտակային: Ծրագրի արժեքը 128 հազար դոլար է, ջրամբարի ծավալը՝ 13,000 խմ: Ծրագիրը միտված է ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը եւ կայուն գյուղատնտեսության զարգացմանը:

Նր: Արեւածագ բնակավայրում էլ իրականացվում են լայնածավալ ճանապարհաշինական աշխատանքներ: «Կային ժամանակներ, երբ մեր երեխաները գյուղերում դպրոց էին գնում երկու զույգ կոշիկով. մեկը՝ ցեխապատ ճանապարհներով դպրոց հասնելու, մյուսը՝ դպրոցում կրելու համար», - ասել է մարզպետը՝ ընդգծելով ճանապարհների բարեկարգման կարևորությունը: Ավազերում Սարահարթ թաղամասում գտնվող թիվ 12 դպրոցում մարզադահլիճ է կառուցվել, սակայն աշխատանքը չի ընդունվել, քանի որ արձանագրվել են թերություններ: «Աշխատանքը չի ընդունվելու: Խնդրահարույց մասերը քանդեք, Նորից սարքեք: Լուծումների մասին մտածեք, ընդ որում՝ արագ», - հանձնարարել է մարզպետը: Աբրի գյուղում էլ, որը 2 հազար 600 բնակիչ ունի, կառուցվում է 6 միլիոն դոլար արժողությամբ Նոր կրթահամալիր: Ծովի մակարդակից 1500 մ բարձրության վրա գտնվող, 390 բնակիչ ունեցող Կաճանկուտ գյուղում էլ է համայնքի ու պետությունից համաֆինանսավորմամբ ասֆալտա-

պատվել գյուղի կենտրոնական ճանապարհը: Համայնքային բյուջեի միջոցներով հիմնանորոգվել է պուրակը, որն անբարեկարգ վիճակում էր:

Ավազերի համայնքի Արեւածագ բնակավայրում եւս աշխատանքներ են իրականացվել, որի համար մարզպետը շնորհակալություն է հայտնել բնակիչներին եւ ընդգծել, որ համայնքներում իրականացվող յուրաքանչյուր ծրագրի արդյունավետության լավագույն չափանիշը քաղաքացու գնահատականն է:

Լուսի



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

## ՎՐԱԾԱՐՎԵԼ Ե ԿԱԹՈՒԿՈՒԹՅՈՒՆԻՑ, ԴԱՐՁԵԼ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՏԵՎՈՐԴ

Հայ առաքելական եկեղեցու պատմությունն ուսումնասիրելիս անհնար է չառնչվել հայ աստվածաբանական մտքի 19-20-րդ դարերի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկի՝ Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանի անձին: Նրա հեղինակած՝ առաքելական եկեղեցու պատմության «Ազգապատում» աշխատություններն առայսօր անգերազանցելի են եւ համարվում են դասական գործեր, առանց որոնց հնարավոր չէ եկեղեցական պատմության ուսումնասիրությունը:

Օրմանյանը ծնվել է 1841 թ. փետրվարի 23-ին, Կոստանդնուպոլսում՝ հայ կաթոլիկ ընտանիքում: Վաղ տարիքից նա հետաքրքրություն է ցուցաբերել հոգեւոր եւ գիտական գիտելիքների հանդեպ, ինչն էլ կանխորոշել է նրա հետագա ուղին: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա՝ 1851-ին, Պողոս Օրմանյանը (այդպես էր պատրիարքի աշխարհիկ անունը) մեկնել է Հռոմ, որտեղ ուսանել է Աստուկյան հայ կաթոլիկ միաբանության Սբ Գրիգոր վանքում: Կրթությունը շարունակել է Վատիկանում, ստացել փիլիսոփայության, աստվածաբանության եւ եկեղեցական իրավունքի մագիստրոսի աստիճան, դարձել Հռոմի աստվածաբանական ակադեմիայի անդամ եւ հայոց լեզու դասավանդող Հավատի քարոզչության կոլեգիայում: 1869-1870 թթ., որպես կաթոլիկ աստվածաբան, մասնակցել է Վատիկանի առաջին Սեծ ժողովին: 1876-ին վերջնակա-

նապես որոշել է խզել կապերը Վատիկանի հետ եւ հրաժարվել կաթոլիկությունից՝ դառնալ առաքելական եկեղեցու հետերորդ: 1879-ին ստացել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու ծայրագույն վարդապետական աստիճան: 1880-ին դարձել է Երզրումի հայերի առաջնորդը, իսկ ավելի ուշ՝ գլխավորել Արմաշի դպրեվանքը, որտեղ կրթել է հոգեւոր գործիչների մի ամբողջ սերունդ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Օրմանյանը Ներսես Վարժապետյանի հետ գործուն մասնակցություն է ունեցել Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի մասին փաստաթղթերի պատրաստմանը եւ հայկական հարցի հայեցակարգի մշակմանը: Դա կարեւոր ավանդ էր 19-րդ դարի վերջի հայ ժողովրդի քաղաքական եւ հասարակական մտքի ձեւավորման գործում: 1896 թ. Նոյեմբերի 6-ին Օրմանյանն ընտրվել է Կոստանդնուպոլսի պատրիարք եւ այդ պաշտոնը զբաղեցրել մինչեւ 1908 թվականի հուլիսը: Նրա պատրիարքությունը համընկել է պատմական բարդ ժամանակաշրջանի հետ, երբ Օսմանյան կայսրությունում հայ համայնքը բախվում էր քաղաքական եւ սոցիալական լուրջ մարտահրավերների, եւ արդեն զգացվում էր, որ Օսմանյան կայսրությունը մոտենում է իր մայրամուտին: Դա առաջացնում էր թուրք-օսմանական իշխանությունների անկարող կատարությունը, որը թափվում էր հատկապես կայսրության տարածքում բնակվող բրիտանյա ժողովուրդների վրա: Չնայած դժվա-

րություններին՝ նրան հաջողվել է ամրապնդել Հայ եկեղեցու հոգեւոր կյանքը եւ կրթական հաստատությունները: Նրան, ըստ ժամանակակիցների, կոչել են Գագանազուսա, քանի որ, լինելով ճկուն դիվանագետ, կարողացել է հարյուրավոր հայորդիների ազատել սուլթանական պատժից յաթաղանից ու մեղմել Աբդուլ Համիդ 2-րդ Արյունոտ սուլթանի վերաբերմունքը հայերի հանդեպ:

Այսօրվա լույսի ներքե՝ Օրմանյանը հավատքի եւ գիտության, պահպանողականության եւ քաղաքական հավասարակշիռ մտածողության, դիվանագիտական ճկունության եւ լուրջ կառավարչական կարողություններով անձ էր: Օրմանյան պատրիարքի քաղաքական մտածողությունը դրսեւորվում է դեռ 1870-ականների կեսերին իտալական ազգային ազատագրական պայքարի առաջնորդ Ջուզեպե Գարիբալդիի հետ հանդիպման եւ իտալացի ու հայ ժողովուրդների ազգային ազատագրությանը վերաբերող հարցերի բնարկման ժամանակ: Նույն տարում Օրմանյանն ընտրվել է եկեղեցական համագումարի պատգամավոր, կրոնական ժողովի անդամ եւ ապա՝ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ, բայց հրաժարվել է ստանձնել այդ պաշտոնը: Պատրիարքությունը թողնելուց հետո, կյանքի վերջին տարիներին նա ապրել է Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքում, այնտեղ վարել պաշտոններ, դասավանդել տեղի ճեմարանում: 1918-ին վերադարձել է Կ. Պոլիս, որտեղ էլ վախճանվել է:



Կ.ՂԱԳԻԿ, ՊԱՏՐԻԱՐԿ 1896 - 1908

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ամեն անգամ, ընտրություններին հիմնականում կիսաօտարկի պես մարդիկ մեկ էլ հանկարծ նկատում են, որ իրենց բնակարանում ինչ-որ անձանոթ մարդիկ են գրանցված, որոնց ոչ ճանաչում են, ոչ էլ անգամ տեսել են, իսկ եթե նույնիսկ ճանաչում են, ապա այդ մարդիկ վաղուց դուրս են եկել հաշվառումից: Օրեր առաջ լրագրող Հռիփսիմե Առաքելյանն էր ահազանգել, որ իր եղբոր բնակարանում ավելի քան 12 մարդ է գրանցվել: «Եղբորս տան վրա, շատ պատահական հայտնաբերեցի, որ 12 մարդ կա գրանցված: Եղբայրս, լինելով տան սեփականատերը, տեղյակ չէ որեւէ մեկի գրանցումից: Առանց սեփականատիրոջ գիտության, մեր «օրինապաշտ» Հայաստանում մարդկանց տանում, խառը գրանցում են, բնականաբար՝ այլ նպատակներով: Ուրեմն, երեկվանից այս հարցով ենք զբաղվում, ես փորձել եմ հետևապահ մնալ, որ տեսնեմ՝ սրանք ինչկերպ են իրենց պահելու: Նոր Նորքի պատարտ սեղանի ժողովուրդ էլ մասնավորապես՝ պետ, ես հասկանում եմ, որ խառնվել էք իրար ու ահից լայնաշունչ եք, բայց դու չէիր կարող պատկեր

ծեր տներում ու բնակարաններում, կանխեք այս խայտառակությունը, սրանց փոփոխված «կառավարության որոշմամբ», առանց ձեր գիտության, ձեր տների վրա կարող են ում ասես բերեն ու գրանցեն, որից դուք տեղյակ չլինեք, նաև՝ օնլայն տարբերակով: Կրկին ասում եմ՝ այս մեխանիզմը ամրագրված է «կառավարության որոշմամբ», ստուգեք ու ռադ արեք բոլոր անկապ գրանցվածներին: Սրանք պատրաստվում են 2026-ի ընտրություններին: Չգուցե եղեք:»

Ցավոք, սա նոր երեւոյթ չէ, շատ ենք լուր՝ նման պատմություններ, երբ մարդիկ պատահաբար պարզում են, որ իրենց հասցեում տարբեր անձինք են հաշվառված, թե ինչպես, ով է դրա պատասխանատուն, եւ ինչու է դա այդպես, որեւէ պետական կառույցի չի հետաքրքրում, դեռ մի բան էլ ավելին՝ իշխանավորներին ձեռնտու են նման դեպքերը, եթե չասենք՝ հենց իշխանությունների կողմից ուղղորդված՝ ընտրական գործընթացների կեղծման նպատակով:

Ներքին գործերի նախարարությունից փորձեցինք մեկնաբանություն ստանալ, սակայն հարցի

կելի տարածքի սեփականատիրոջ կամ սեփականատերերի գրավոր համաձայնությամբ (տվյալ դեպքում փաստացի բնակության հանգամանք չի ստուգվում)

2. փաստացի բնակության հիմունքներով: Այս դեպքում անձը գրավոր հայտնում է իր բնակվելու հասցեն լիազոր մարմնին՝ դիմելով տվյալ հասցեում հաշվառվելու համար: Անձի՝ դիմումում նշված հասցեում բնակվելու փաստը ստուգվում է ոստիկանության կողմից: Այս դեպքում հաշվառումն իրականացվում է փաստացի բնակվելու փաստը հավաստող տեղեկատվությունը ոստիկանության կողմից ՄԵԾ բաժնի տրամադրվելուց հետո:

Նշենք, որ բնակելի տարածության սեփականատիրոջ կողմից կարող է նախապես հայտնվել առարկություն՝ իր բնակելի տարածության հասցեում դիմումատուին հաշվառելու վերաբերյալ: Տվյալ դեպքում կատարվում է նշում փաստացի բնակվելու (գտնվելու) վայրի մասին (մասնավորապես՝ նշելով շենքը կամ փողոցը):

...Հաշվառված անձը (եթե վերջինս չունի տվյալ հասցեի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք) հանվում է հաշվառումից սեփականատիրոջ կամ համասեփականատերերից մեկի դիմումի հիման վրա: Հավելենք նաև, որ 25.12.2025թ. ընդունված ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1231-Ն որոշման մեջ կատարված լրացումների արդյունքում նախատեսվել է օրենսդրությամբ սահմանված դեպքերում փաստացի հաշվառման դիմումն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն, իսկ հաշվառման կարգը՝ վերոգրյալ պարզաբանումների շրջանակում, փոփոխության չի ենթարկվել:

Ուշադրություն. որեւէ հաշվառում չի չեղարկվում/փոփոխվում, մինչև որ դրա վերաբերյալ գրավոր դիմում չի լինում կամ հաշվառվողի, կամ սեփականատիրոջ կողմից: Դիցուք, եթե տեղի է ունեցել բնակելի տարածքի առեւտրային հաշվառում, տվյալ տարածքում հաշվառված անձանց հաշվառումները պահպանվում են, եթե նոր սեփականատերը չի դիմում լիազոր մարմնին՝ վերջիններիս հաշվառումից հանելու պահանջով: Մեկ այլ օրինակ է, երբ փաստացի բնակության հիմքով հաշվառված անձը փոխում է իր բնակության վայրը: Տվյալ անձի հաշվառումը նույնությամբ պահպանվում է նախկին հասցեում, եթե ոչ բնակելի տարածքի սեփականատերը, ոչ էլ հաշվառված անձը չի դիմում լիազոր մարմնին՝ համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Այսօր մեզիս տիրույթում տարածում ստացած գրառումներից մեկում նշվում էր անձանոթ անձանց հաշվառված լինելու փաստի մասին: Հայտնում ենք, որ դրանք տարբեր տարիների՝ 2006-2019 թթ.-ին կատարված հաշվառումներ են, եւ առաջիկա ԱԺ ընտրությունների հետ կապելու որեւէ հիմք չկա:

Մասնավորապես, ԱԺ ընտրություններին մասնակցելու համար անձի ընտրելու իրավունքը ձեւավորվում է բացառապես 18 տարին լրացած լինելու եւ ՀՀ քաղաքացի հանդիսանալու հիմքով, հաշվառումը չի ազդում ընտրելու իրավունքի վրա: Հորդորում ենք զերծ մնալ մասնիպուլյատիվ եւ սարդիչ բովանդակությամբ գրառումներ հրապարակելուց:

Իսկ իմ դիմել, եթե առաջացել է նման խնդիր. ՆԳ նախարարությունից ասացին, որ այդ հարցի հասցեատերն իրենք չեն, իրենք միայն հաշվառողի դերում են:

# ԻՆՉՊԵՏ ԵՆ ԱՆՇԱՆՈԹ ԱՆՁԻՆՔ «ԳՐԱՆՑՎՈՒՄ» ԶԵՐ ՂԱՍՅԵՈՒՄ

րացնել թո վատ երազում, որ դա իմ եղբոր տունն է, որի վրա 12 հոգու բերել գրանցել եք՝ առանց իր գիտության: Դատախազություն հաղորդում է գնալու, դուք համբերեք, Նելլի Դավթյան, սպասում եմ ձեր արձագանքին», - գրել է Հռիփսիմե Առաքելյանը՝ դիմելով ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետին:

Ավելի ուշ նա մեկ այլ գրառում է արել՝ նշելով. «Հարգելի ժողովուրդ, մտեք elections.am, անցեք «ՀՀ ընտրողների ռեգիստր» բաժին, հավաքեք ձեր անվանական տվյալները, ստուգեք, թե ովքեր են գրանցված

վերաբերյալ մեզ որեւէ հստակ պարզաբանում չստացան, ուղղորդեցին ընթացիկ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության հայտարարությունը. «Պարզաբանում. առանց հաշվառվողի կամ սեփականատիրոջ գրավոր դիմումի, որեւէ հաշվառում փոփոխման ենթակա չէ: Պարզաբանում ենք, որ անձին հաշվառելու ընթացակարգերը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կանոնակարգվում են ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1231-Ն որոշմամբ: Անձը որեւէ բնակելի տարածքի հասցեով կարող է հաշվառվել 2 եղանակով՝ 1. բնա-

փականության կամ օգտագործման իրավունք) հանվում է հաշվառումից սեփականատիրոջ կամ համասեփականատերերից մեկի դիմումի հիման վրա: Հավելենք նաև, որ 25.12.2025թ. ընդունված ՀՀ կառավարության 14.07.2005թ. թիվ 1231-Ն որոշման մեջ կատարված լրացումների արդյունքում նախատեսվել է օրենսդրությամբ սահմանված դեպքերում փաստացի հաշվառման դիմումն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն, իսկ հաշվառման կարգը՝ վերոգրյալ պարզաբանումների շրջանակում, փոփոխության չի ենթարկվել:

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, գանգեք մեզ 011 (55,94) 52 66 70, info@hraparak.am Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՅԵ ԶԱՅՈՐԴ ԶԱՄԱՐՈՒՄ

**բաժանորդագրություն**  
Բաժանորդագրության համար դիմեք՝  
Պրեսա Ստեղձ՝ 093 88 68 01  
Բլից մեդիա 52 53 01

**VEOLIA**  
Զուր

հրատարակ Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան թողարկման պատասխանատու info@hraparak.am Ստորագրված է տպագրության 27.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաբանակը՝ 3000 օրինակ:

# ԿԿԱՐՈՂԱՆԱԴՆ ԱՅՍ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ՊԱՎՊԱՆԵԼ



«Հրապարակի» գրուցակիցը նախկին սոցալախարար Աշոտ Եսայանն է:

- Պարոն Եսայան, կենսաթոշակներն ապրիլի 1-ից կբարձրանան մինչև 10 հազար դրամով: Արդեն երկու օր է, ինչ իշխանավորները ցնծության մեջ են՝ համարում են, որ արդեն իրենց գրպանում են թոշակառուների բվեները, իսկ ընդհիմադիր որոշ ուժեր էլ հայտարարում են, որ իրենց ճնշումների շնորհիվ է Փաշինյանի իշխանությունը թոշակները բարձրացնում: Դուք ինչ կարծիք ունեք այս ամենի վերաբերյալ:

- Կառավարությունը վերջին անգամ թոշակները բարձրացրել էր մի 4 տարի առաջ: Սակայն այդ բարձրացումները կատարվել են բանկային համակարգով, ինչը կարող եմ ասել, որ անգամ բարձրացում էլ չէ: Հիմա 10 հազար դրամը, իհարկե, թոշակա-

ռուի համար փոքր գումար չէ: Տարբերակված մոտեցում կա, չեմ կարող հստակ ասել, սակայն եթե աղքատության դեմ ուղղված լինել այդ ամենը, ապա կարող էր լինել այնպես, որ նպաստառուների գումարն ավելի շատ բարձրացվեր, ինչի արդյունքում աղքատության մակարդակը կարող էր փոխվել: Բայց եթե այստեղ կա այլ ենթատեքստ, այ, սա խնդիր է:

- Արդյո՞ք չկա ենթատեքստ:

- Մամուլում գրում են, որ այս ամենը պայմանավորված է ընտրություններով, այդ պարագայում կարող էին հունիսին նոր ավելացնել:

- Չէ, դե թոշակառուն մի բանի ամիս պետք է «վայելի» այդ «ահռելի» գումարը, որ գնա՞ իրենց ձայն տա:

- Բայց թե հետո ինչ կլինի, միայն Աստված գիտի, որովհետեւ այն իրականում թմբկի բեռ է կառավարության

վրա, կարելո՞րն այն չէ, որ հիմա մի քանի ամսով թոշակ են բարձրացնում, կարելո՞րն այն է, որ այն պահպանվի, լինի շարունակական, գնալով ավելի բարձրանա, այլ ոչ թե մի անգամ բարձրացրին, ու վերջ: Թող հիմա հայտարարեն, որ, օրինակ, հոկտեմբեր ամսին եւս մի 5 հազար դրամով բարձրացնելու են, այ, դա կլինի թե՛:

- Բայց, ի՞նչ էք կարծում՝ այդ փոքրիկ գումարը կազդի՞ թոշակառուի քաղաքական հայացքների վրա:

- Այն մի 30 հատ հացի գին է, իսկ դա նշանակում է, որ թոշակառուն ամսվա կտրվածքով մեկ հաց նվեր է ստանում: Ամեն դեպքում, ծմռան ամիսներն են դժվար: Կոմունալ ծախսերն այս 3 ամիսներին գերազանցում են, ծմռե է, ցուրտ է, իսկ հնարավորությունները փոքր են: Այ, եթե դեկտեմբերից ավելացնեին թոշակները, այն ավելի հասցեական կլիներ, ապրիլին մարդիկ կունենայ թռչչաբանի գումարներ չեն ծախսում: Կենսա-

թոշակառուի համար՝ ես կարծում եմ, որ այդ 10 հազարը կարելո՞ր է: Ինչ վերաբերում է թոշակառուի քաղաքական հայացքներին եւ իշխանություններին ընտրելուն, վստահ եմ, որ այդ 10 հազար դրամն ազդեցություն չի ունենալու: Բացառվում է: Պետք է ասեն, 10 հազարը բարձրացրել եմ, գնա ինձ ընտրի: Չեմ կարծում, դա ոչ մի էֆեկտիվություն չի թողնի: Այս ամբողջ թե՛նքը գուցե աշխատեք, եթե տալուն զուգահեռ նաև անձամբ մարդկանց խնդրեք, հորդորեք, որ թե՛ ընտրեն: Բայց այդ բանը՝ հիմա չեմ կարծում, որ լինի, նույնիսկ փոստատարի ծառայություններն են վերացրել, որ փոստատար գնա՞ նման առաջարկ անի:

- Նաև՝ մեծ աշխատանքային ստաժ ունեցողները ստանալու են ավելի քիչ թոշակ, բան նրանք, ովքեր ողջ կանգնում են աշխատել:

- Ես մի փոքր չեմ հավատում դրան: Զգիտեմ, թե ինչպես կարող է այդպես լինել: